

Արջուց և առիւծուց յորս ինչ վայրագ խոյացելոց,  
Փութացեալ այրքան զընկեր մոլին յընթացսն արշաւասոյր .  
Ըզգրունսըն խորտակէն , և ով սարսուռ , ով ապշութիւն ,  
Արիւնրուուշտ մօտ դիական աշաց իւրեանց անդ երեկ  
կին ոմն արիւնաթոր և 'ի ցնորիցըն բանդագուշ :  
« Այս , ճիւակը գազանասիրտ , իմ է որդի սա ճըշմարիտ .  
Դուք ըզձեռու իմ , ասէ , յարիւն նորին թամթաւեցէք .  
կերայք օն առ մի նուռագ տատ և ըզմայրն ընդ որդեկին .  
Մի երկիւղ ձեղ , չըլինիք քան զիս բնութեան ապախտաւորք .  
Քանի արհաւերք աշացս իմոց զի ցամափիք .  
Զեզ , ով վազերք , սոյնգունակ խրախճանութեանց հասոյիթք 'ի ճահ » :  
Զոյդ բանիցըն մոլեկան՝ զոր դանդաշէր նա 'ի շըրթանց՝  
Հար մըլսեաց պողովատիկ ըզսուրն 'ի սիրտ իւր յանկարծոյն :  
Յայն տեսիլ ճիւազացըն պակուցեալ հիազարհուր ,  
ի փախուստ խուճապական աճապարեն տագնապափայթ ,  
Անժբափիրհք առ գամ մի ևս հայել 'ի տունն աղետաւոր .  
Կարծեալ իմն այնպէս թէ յանձինըս տեղայցէ հուր 'ի յերկնուստ .  
Եւ ժողովուրդն յարհաւրաց բաղդին հարեալ զահի մեծի  
Զեռնամքարձ 'ի խընդիր մահու զերկինս ողոքէին :

Թարգմ. Հ\*\*\*

## Զ.Ա.ՊԵԼ

Զապէլ՝ մինչզեռ տըղայ փոքրիկ ,  
Աղքասաներոն կոտ տար հացիկ ,  
Մուրացկանին ճամբոն վերաց ,  
Նա սիրտ կոտ տար՝ որ դիմանայ .  
« Քուկին արցունք պիտի դադրին  
« Վասն արտասուաց Մարիամ կուսին :  
« Սըրտանց սիրէ զՄարիամ կոյս ,  
« Նա չի թողուր ըզքեզ անցյս » :

Մօտի գեղին տըւարածին .  
Նա միշտ կ'ասէր , ազք խընդապին .  
« Բարի զործերդ միշտ ջըրին դէմ՝  
« Հեղեղներէն վեր՝ պիտ' ենեն ,  
« Ազօթասէր , բարի հովուին  
« Ոչսարք պիտի ծըլին ծաղիլին :  
« Սըրտանց սիրէ զՄարիամ կոյս ,  
« Նա չի թողուր ըզքեզ անցյս » :

Նա՝ խաշնարած մի աղջրկան  
« Արի , ասաց , մեք միաբան  
« Մունըր դընէնք խոտին վերան ,  
« Ասէնք կուսին սուրբ վարդարան :

« Աստուածամայր մեր դիմաց  
« Երկնքին գուրը կ'անէ բաց :  
« Սըրտանց սիրենք ըզՄարիամ կոյս ,  
« Նա չի թողուր գատարկ մեր յոյս » :

Օր մի թողլով շըներն և հօտ  
Նոյն և մախաղը գեղին մօտ ,  
Նա միս մինակ առաջ ըընաց  
Կըննոյն ներքեւ . տեսաւ դիմաց  
Կոյսն Մարիամ կայնած շխառակ .  
Այն ինչ օր էր , այն ինչ մեծ փառք ,  
Սիրենք սըրտանց ըզՄարիամ կոյս ,  
Նա չի թողուր գատարկ մեր յոյս :

Կոյսն երեցաւ յոյժ փառաւոր ,  
Խնչպէս Յիսուս լերին Թափօր ,  
Զախին ըընած բոք փղոսկրի ,  
Ալ ձեռքը կար մի իլ սոկի :  
Զապէլի սիրու թունդ երսած ,  
Երկըրպագեց կուսին դիմաց :  
Սըրտանց սիրենք ըզՄարիամ կոյս  
Նա չի թողուր ըզմեզ անցյս :

ԼԱՅԱՄԲՈԴԻ